Հովհաննես Թումանյան

Ռուստեմին

«Սիրտդ է հիվանդ, պետք է բուժել
Խաղաղ ծոցում բնության...»
Գըտար, ընկեր, ու ճիշտ այդպես
Հիվանդ է նա անպայման:

Նրա ձայնը դու լըսեցիր
Ու խոսեցիր սըրտագետ,
Բայց ես, անփույթ, անուշադիր,
Միշտ կըռվել եմ նըրա հետ:

Քարշ եմ տըվել նըրան անկամ

Հազար ճամփա, հազար տուն,
Ծիծաղել եմ հազար անգամ,
Երբ լալիս էր նա թաքուն:

Զըսպել եմ ես նըրան իմ մեջ
Խալխի խոսքով ու չափով,

Ճընշել եմ ես նըրան անվերջ
Կյանքի ամեն տագնապով:

Ու, վերջապես, հոգնել է նա,
Եվ լրսում ես դու նրրան,
Լուռ հանգիստ է ուզում հիմա,

Նույնիսկ թեկուզ գերեզման:

1901